

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մեջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Маска».
Կամ Tiflis, Rédaction «Maschak».
Տ է Լ Ե Ֆ Ե Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առիթներէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաւքանչւր տողաւորով 10 կոպեկով.
Տ է Լ Ե Ֆ Ե Ն № 253.

ՀԱՅԵՍՏԱՆԻ ՊԱՆԴԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՐԱՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական վարձատրութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Բագուի առեւտրական միջնակարգ
գործը. Նամակ Գանձակից. Նամակ Մոզգո-
կից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արաւսի լուրեր.
— ՀԵՌԱԳԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցուցահանգէսը:

ԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ

Մեր առաջ գրված է մի շատ կարեւոր
հարց, այն է գրական աշխատանքի վար-
ձատրութեան հարցը: Այն անձը, որ իրան
նուիրել է գրական գործին, պէտք է կա-
րողանայ վարձատրվել իր զբաղմունքով,
որպէս զի նա ստիպված չը լինի դիմելու
ուրիշ միջոցների իր կենսական պիտոյը-
նեքը անվաճովելու համար:

Մի երեք տասնեակ տարի սրանից ա-
ռաջ գրականութիւնը մեր մէջ դեռ շատ
քիչ էր զարգացած: Լրագիրների թիւը
քիչ էր և նրանք լոյս էին տեսնում շա-
բաթը մի անգամ: Յօդուածագիրները պա-
տահական անձինք էին, որոնք երբեմնա-
պէս, իրանց ազատ ժամերին, գրում էին
թղթակցութիւններ և զանազան յօդուած-
ներ, հարց չը յարուցանելով վարձատրու-
թեան մասին: Այն ժամանակվայ գործըն-
քի մեծ մասը նոյն իսկ անյարմար և ան-
վայելուէ էր համարում գրական աշխա-
տանքի համար վարձատրութիւն ստանալ:
Դարձը բաւականութիւն էր տալիս զաղա-
փարական պահանջին և գրական վար-
ձատրութեան հարցուի չէր դալիս:

Անցան ժամանակներ. գրականութիւնը
զարգացաւ, լրագրութիւնը սկսեց կլանել
մեծ քանակութեամբ գրական նիւթ: Հար-

կաւոր էին մշտական աշխատողներ, որոնք
իրանց ժամանակը նուիրէին գրականու-
թեանը և դարձնէին նրան իբրև իրանց
մշտական զբաղմունք: Բացառիկ անձնա-
ւորութիւններ, նիւթապէս ապահովված
լինելով, անկասկած կարող էին շարունա-
կել իրանց գրական գործունէութիւնը ա-
ռանց հարց յարուցանելու գրական վար-
ձատրութեան մասին: Սակայն գործողնե-
րի մեծամասնութիւնը չէ պատկանել և
չէ պատկանում ապահովված դասակար-
գին և գրական աշխատանքի ներկայացու-
ցիչների մասան միշտ եղել է անապահով
դասակարգից: Դադարաւրէն ծառայելը,
գրական խօսքով օգտուէտ հասարակական
գործ կատարելը երբ դառնում են մշա-
կան զբաղմունք, նրանք հերթական են
դարձնում այդ գործողների նիւթական
ապահովութեան հարցը:

Մեր մէջ էլ մտաւ գրական աշխատան-
քի վարձատրութեան սկզբունքը և կան
մի խումբ մարդիկ, որոնք իրանց ապրուս-
տը հայթայթում են գրական վարձատրու-
թիւնով: Սակայն մինչև այժմ քիչ գործ է
կատարված այդ սապարէզում: Գրական
գործողների մեծամասնութիւնը դեռ մնում
է չը վարձատրված: Խմբագրութիւնների
մէջ մի քանի անձինք և անկենսաշխատ-
ող աշխատակիցները ստանում են վարձա-
տրութիւն, իսկ գաւառական թղթակից-
ները, կողմնակի աշխատակիցները դեռ
ոչինչ չեն ստանում:

Անկասկած պարբերական մամուլի խմ-
բագրութիւնները կարող կը լինեն մոցնել
լինդհիւստը գրական վարձատրութեան ըս-
կըզբունքը բոլոր յօդուածներին և թղթակ-
ցութիւններին համար, եթէ նրանք ունե-
նային բաւական թւով բաժանորդներ, եթէ
մեր ընթերցող հասարակութիւնը աւելի

ընդարձակ լինէր, քան ներկայումս է:
Մեր մէջ մինչև այժմ լրագիրը անկարող
է երեք հազար բաժանորդ ունենալ և դեռ
գէֆիցիտների մշտական սպառնալիքների
տակ է գտնվում: Մեր մեր լրագիրը, որ
չորս տարի առաջ հրատարակվում էր
շաբաթական երեք անգամ, շինեցինք հինգ-
անգամեայ և այս տարվանից լոյս ենք ըն-
ծալում վեց անգամ, սակայն մեր արած
ծախքերի համաձայն հասարակութիւնը
չաւելացրեց լրագրի եկամուտը և մենք
շարունակում ենք զոհողութիւններ անել
լոյս ունենայով ապագայի վրա:

Մենք հաւատացած ենք, որ լրագիրը
իր բնական զարգացմամբ ժամանակով և
մեր մէջ կապահովէ խմբագրութեան բո-
լոր ծախքերը և թոյլ կը տայ խորհել
գրական աշխատողների լիակատար վար-
ձատրութեան մասին: Սակայն այդ ժա-
մանակը կարող է շատ ուշ գալ, իսկ կա-
րիքները մնում են կարիքներ: Մենք ա-
յապալի յոյսով վերցրել ենք մեզ վրա այն
բոլոր գէֆիցիտները, որ կազմվում են
լրագրի յաճախ հրատարակութիւնից: Սա-
կայն գրական աշխատանքի ապահովու-
թեան հարցը պէտք է վերցնել իր վրա
հասարակութիւնը և կազմէ մի յատուկ
ֆոնդ գրական աշխատանքի վարձատրու-
թեան համար:

Գրական գործողների թիւը շատ է և
նրանց աշխատանքի ապահովութեան հար-
ցը մեր հասարակութեան համար կարե-
ւոր հարց է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳՈՒԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԸԳ-
ՐՈՑԸ

Նաւթային աշխարհում աւելացում մի միջ-

պատճառները որոշ չափով հասկանալի են:
90-ական թւականներից նաւթային աշխարհում
մի այնպիսի տենդային գործիւն է ստեղծվել,
մի այնպիսի լարված մրցում է սկսվել, որ
միայն խոշոր գործառնութիւնը կարող են ձեռ-
նարկութիւններ անել, անսպասելի կրիզիս-
ների դիմանալ և գոյութիւն պահպանել
1896 թ. Բինադադի հողերը ծախվում էին
դեռեւտինը 700—800 ռուբլիով, 1897 թ. այդ
գոյութիւնը մէկից հասաւ մինչև 3—4000-ի,
իսկ 90-ական թւականների վերջը—մինչև
14—15,000 ռուբլի: Սարաի, Բիլգի գիւղե-
րում, որտեղ նաւթային հեղք անգամ չը կայ,
մէկ դեռեւտին հողի գինը բարձրացաւ մինչև
1000 ռուբլի, իսկ Չարաա գիւղում մէկ դե-
սիաւտինը ծախվում էր 25—45,000 ռուբլի:
Պարզ է, որ մի քանի հազարներով այլ եւս
չէր կարելի ապարէզ մտնել: Հարկաւոր էին
աւելի մեծ գումարներ, աւելի մեծ բիւլ, Ե-
րոնցից զուրկ էին փոքր ֆիրմաներն ու մանր
գործատէրերը: Բայց այդ դեռ բոլորը չէ: Գը-
նած հողի վրա դեռ մի քանի տասնեակ ու
հարիւր հազարներ պէտք էր ծախել, մինչև
որ նաւթ դուրս գար և արդիւնք ստացվէր:
Սկզբնութեւ 10—24 սաժէն խորութիւնից
նաւթ էր դուրս գալիս, իսկ այժմ հարկաւոր
է փորել 194—262 սաժէն—(Արտուշիում 198
—219 սաժէ, Բոմանիում 206—243 սաժէ, Բի-
րի-Հէյրաում 194—262 սաժէ. եւ այլն):

Այդ բոլորից յետոյ կարծես հասկանալի պէտք
է լինի մանր ֆիրմաների անհետանալը և
խոշոր ընկերութիւնների ու գործատէրերի
ապարէզ գալը: 1895 թ. գոյութիւն ունեցող
120 ֆիրմաներից միայն 4 էր ակցիոներական
ընկերութիւն: 1898 թ. դրա վրա աւելացան
8 նոր ընկերութիւններ, որոնցից 5-ը զուտ
առուական կազմակերպութիւններ էին—10 մի-
լիոն դրամալիւով, իսկ մնացած 3-ը—անգլիա-
կան՝ 35 միլիոն դրամալիւով: Վերջին երկու
տարիներում թէ առական և թէ օտարերկ-
րեայ գործադուլներով կազմակերպած ակ-
ցիոներական ընկերութիւնները աւելի բազմա-

նակարգ դպրոց եւս: Կիրակի, հոկտեմբերի
14-ին, տեղի ունեցաւ առեւտրական միջնա-
կարգ դպրոցի հանգիստաւոր բացումը, ներկա-
յութեամբ նախագահաւոր, պարսից հիւպատո-
սի, զանազան բարձրաստիճան անձանց և
երկու սեռի խումբ բազմութեան:

Դպրոցի բացման նախաձեռնութիւնը պատ-
կանում է ֆինանսների մինիստրի օգնական
Կովալեւսկիին, որը 1899 թ. հոկտեմբերին տե-
ղի ունեցող նաւթարդիւնները ծաղովին
նախագահելու ժամանակ միտք յայտնեց Բագ-
ուում առեւտրական դպրոց հիմնելու: Նպատա-
կալարմար միտքը հաւանութիւն գտաւ և ան-
միջապէս ձեռնարկեց ժողովարարութեան:
Առաջին նուազ ժողովարարութիւնը հասաւ
140,500 ռուբլու, որից Հ. Զ. Ա. Թաղիւի
նուիրեց 50,000 ռ., Եօբէյ, Մանթաշեան և
«Каспийско-Черноморск.» ընկ. (Բաշիլդ) 20
հազարական ռ., «Общ. д.я добыв. русск.
нефти и жидк. топил.» եւ «Кавказская» ընկ.
10,000-ական ռ., «Русск. нефт. 0—во» եւ
Հ. Մէլիքեան՝ 3,000-ական ռ., Վիդիլով՝
2,000 ռ., Ֆէյզլի եւ Շուսիսէր՝ 1,000-ական
ռուբլի, Ա. Ունանեան՝ 500 ռ.:

Ժողովարարութիւնը շարունակելու եւ նա-
խապատրաստական գործերը վարելու համար
կազմվում է մասնաժողով յանձին պ. Դուկա-
սեանի, Բրէյցկու, Շուսիսէրի, Ար. Ունանեա-
նի և Տիխոնովի, որը եւ նշանակվում է գան-
ձապահ, իսկ քարտուղար նշանակվում է Ար.
Դաստակեան: Ստորագրվել շարունակում են՝
Չուբալով 15,000 ռ., Արամեան, Յակ. Աղա-
մեան եւ Շամսի Ասադուլլաեւ 5,000-ական ռ.,
Եղբ. Գոլդիւստ, Եղիաշեան, Ալ. Աղաբեան
և Մուսա-Նադիրով՝ 2,000-ական ռ., Դու.
Իւզաշեան՝ 1,000 ռ., Բաւաթով եւ Ալուսով,
Ման. Հիւսէյնով, Հաջի-Նէյմազ Սէլիբով եւ
Հան-Խան Հիւսէյնով՝ 500-ական ռ.: Ընդամե-
նը 184,000 ռ. դպրոցի շինութեան համար:

ցել են: Նոյն իսկ խոշոր ֆիրմաներից շատերը
աշխատում են ակցիոներական ձեւ տալ իրանց
գործին: 1890 թ. աւելանալով մինչև 1899 թ.
նաւթային գործ են սկսել 149 ֆիրմաներ,
բայց դրանցից միայն 94-ն են իրանց գոյու-
թիւնը պահպանել: Անհետացան 55 ֆիրմանե-
րը կամ միայն են միմեանց հետ եւ ակցիո-
ներական ընկերութիւններ կազմակերպել կամ
կուլ են գնացել խոշոր ֆիրմաներին:

Մոշոր կապիտալները նոյնպիսի կենտրոնաց-
նող դեր են կատարել նաեւ նաւթային գոր-
ծարանական կենտրոն, այսինքն հետզհետէ
օճչացրել են մանր գործարանները և մնա-
ցած սակաւաթիւ մեծ գործարանները կենտրո-
նացրել են խոշոր գործարանների ձեռքում: Դի-
մենք փաստերի *):

1880 թ. Բագու քաղաքում եւ նրա շրջա-
կայքում կային ընդամենը 195 նաւթային
գործարաններ, որոնք տարեկան 8 միլիոն
պուդ նաւթ էին գտնում: Տարւ տարի յետոյ,
այսինքն 1890 թ. մնացել էին միայն 148
գործարան, որոնք պատրաստում էին տարե-
կան 63 միլիոն պուդ նաւթ: Վերջապէս ան-
ցնալ 1900 թ. մնացել էին 74 գործարան,
բայց դրանք պատրաստում էին աւելի մեծ
քանակութեամբ նաւթ, այսինքն 124 միլիոն
պուդ: Այդ թւերից պարզ երեւում է, որ նաւ-
թային գործարանները տարեցտարի քչացել
են, իսկ նրանց զուտ նաւթի քանակութիւնը
ընդհակառակը աւելացել է: 1891 թ. Իւրա-
քանիւր գործարանին գալիս էր միջին թւով
685,000 պուդ զուտ նաւթ, իսկ վերջին եր-
կու տարիներում—մօտ 2 միլիոն պուդ: Տա-
րեկան 100,000 պուդից պակաս պատրաստող
գործարանները արագութեամբ անհետանում
են: Ահա այդքան զօրեղ է մեծ կապիտալների
ազդեցութիւնը, այդքան ուժեղ է անտեսական
մրցման նշանակութիւնը:

Ե. Թ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Վերցնենք, օրինակ, վերջին տասնամեակը
և տեսնենք, թէ Անգլիայի, Գերմանիայի,
Ռուսաստանի և Կովկասի իւրաքանչիւր բնա-
կիւն տարեկան միջին թւով քանի ֆունտ
նաւթ է գործածում *):

Անգլիա Գերմանիա Ռուսաստան Կովկաս

1891	24	30	10	»
1892	24	35	9	»
1893	28	36	12	»
1894	31	37	10	»
1895	31	38	10	»
1896	33	40	11	8
1897	29	41	11	8
1898	39	40	12	9
1899	42	40	13	9
1900	42	41	13	11

Ուրեմն անցնալ 1900 թ. իւրաքանչիւր անգ-
լիացի գործ է ածել միջին թւով 42 ֆունտ
նաւթ, իւրաքանչիւր գերմանացի—41 ֆ., ռու-
սաստանցի—13 ֆ., իսկ իւրաքանչիւր կով-
կասցի միայն 11 ֆունտ: Անկարգրէք դրա վրա
նաեւ այն հանգամանքը, որ Անգլիայում ու
Գերմանիայում չափազանց տարածված են
գազն ու էլէքտրականութիւնը եւ այն ժամա-
նակ հասկանալի կը լինի, թէ Ռուսաստանը
եւ Կովկասը որքան յետ են մնացել այդ տե-
սակէտից: Պատճառը մասամբ ակցիոնի ճնշումն
է *), մասամբ էլ ժողովրդի կուլտուրան եւ
անտեսական պայմանները:

Այժմ տեսնենք, թէ նաւթային գործը որքան

մեծ գումարներ է կլանել միայն վերջին տաս-
նամեակի ընթացքում: Այդ ժամանակաշրջա-
նում ամբողջ Անգլիոյն թերակղզու վրա
ստացված է 3157 միլիոն պուդ նաւթ, որի
համար փորված է 740 վերստ խորութիւն և
ծախսած է 110 միլիոն ռուբլի: Միայն փորելու
համար իսկ եթէ այդ գումարով վրա աւելաց-
նենք գործարանական եւ միւս ծախքերը, այն
ժամանակ կը ստանանք աւելի մեծ գումար,
այն է 170 միլիոն ռուբլի: Միայն անցնալ
1900 թ. ծախսած է մօտ 38 միլիոն ռուբլի:

Ներկայումս Անգլիոյն թերակղզու վրա
չաւագործվում է ընդամենը 906 դեռեւտին
նաւթաբեր տարածութիւն, որից 379 դեռեւ-
տին Բալթիկում, 275 դեռեւտին—Սաբոն-
չիում, 75 դեռեւտին Բոմանիում, 158 դե-
ռեւտին Բիլգի-Հէյրաում եւ 19 դեռեւտին
Բինադադիում: Իսկ ստացված նաւթային նիւ-
թերի քանակութիւնը այդ տեղերի համեմատ
1900 թ. դասաւորված է եղել այսպէս *).
Բալթիկային . . . 124,680,087 պուդ
Սաբոնչի . . . 251,634,159 »
Բոմանի . . . 114,835,986 »
Բիլգի-Հէյրաում . . . 109,207,063 »
Բինադադի . . . 406,517 »

Ընդամենը 600,763,812 պուդ

Այդ մի եւ նոյն թուականին նաւթարդիւնա-
րեքող ֆիրմաների թիւը հասնում էր 146-ի,
որոնց մէջ առաջնակարգ տեղը բռնում են
Մանթաշեան եւ ընկ., Եօբէյ, «Вак. 0-во рус.
нефти», Շիբալով եւ ընկ., Թուսայեւ եւ ընկ.,
Թաղիւի, Ասադուլլաեւ, Փիթոյեւ եւ ընկ.,
«Каспийск. Т-во», Չուբալով եւ այլն:
Այստեղ անհրաժեշտ է արձանագրել մի հե-
տաքերի երեւոյթ, որ առանձնապէս աչքի է
ընկնում վերջին ժամանակներու նաւթ արդիւ-
նաբերող մանր ֆիրմաները հետզհետէ զազա-
րեցնում են իրանց գոյութիւնը, իսկ միւս
կողմից աւելանում են ակցիոներական ընկե-
րութիւնները եւ խոշոր ֆիրմաները: Դրա

*) Պարզութեան համար վերցնում ենք միայն
ամբողջ թուերը:

*) «Труды XIV съезда нефтепромышленников
въ Баку. Доклады М. Алябегова».

*) «Обзорь Бакинской нефтяной промышлен-
ности за 1900 год».

*) Старцевъ: «Вак. нефт. промышл.»

Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкокая ул.